ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
т. XXVIII, № 5, 1975

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԺՈՐԺ ՎԵՆՍԱՆ ԱԶՆԱՎՈՒՐ (1861—1920)*

Բուսաբան Ժորժ Վենսան Ազնավուրը, որի կենսագրությունից մեզ քիչ բան է հայտնի, իր կյանքը նվիրել է Ստամբուլի ֆլորայի ուսումնասիրմանը։

Ազնավուրները սերում են Վրաստանի մի հին գերդաստանից։ Ժորժ Վենսան Ազնավուրի հայրը՝ Վիշեն Ազնավուրը (1807—1871) աշխատել է գանձապահ-հաշվապահ։ 1849 թ. նա ամուսնացել է Թագուհի Մարուշյանի հետ, որը Ստամբուլի մի նշանավոր ընտանիքից էր։ Նրանց ավագ արու զավակը՝ Ժորժ Վենսան Ազնավուրը (ըստ եկեղեցական արձանագրության՝ Գևորգ Վիշենի Ազնավուրյան) ծնվել է 1861 թ. դեկտեմբերի 18-ին, Ստամբուլում։

Ազնավուրն իր կրթությունը ստացել է Կալաթասարայի լիցեյում։ Թուրքերենից ու հայերենից բացի, գիտեր ֆրանսերեն, լատիներեն և հունարեն. նա ուսումնասիրում էր աստղաբաշխություն և հատկապես բուսաբանություն, բայց միաժամանակ հետաքրքրվում էր նաև երաժշտությամբ։

Ֆրանսիական բուսաբանական ընկերության հրապարակած տեղեկագրից իմանում ենք, որ Ազնավուրը սկսած 1885 թ. այսինքն՝ 24 տարեկան հասակից սկսել է հավաքել Ստամբուլի շրջակայքի բույսերը։ Սերը դեպի Ստամբուլի ֆլորան նրան մղել է մի կողմից՝ հարստացնելու իր հավաքածուն, մյուս կողմից՝ ձեռք բերելու համապատասխան գրականություն և կարճ ժամանակվա ընթացքում դառնալու հարուստ հերբարիումի ու գրադարանի տեր։

1896 թ. Ազնավուրը դառնում է ֆրանսիական բուսաբանական ընկերության անդամ, ուր մնում է մինչև իր կյանքի վերջը։

Նա իր առաջին գիտական հոդվածը հրատարակել է ֆրանսիական բուսաբանական ընկերության տեղեկագրում։ Այս ուսումնասիրության մեջ տարբեր տաքսոններին վերաբերող նոր բույսերի հետ մեկտեղ բերվում են նաև Ազնավուրի հայտնաբերած 10 նոր տեսակները։

Սկսած 1885 թ. մինչև իր մահը, 36 տարի շարունակ, Ազնավուրն անընդմեջ ստեղծագործել է։ Ստամբուլում նրան ճանաչում ու գնահատում էին Ֆրիշը, Հեքիմյանը, Քյոփրյուլյուն, Լսատ Շերաֆեդդին, Լոբրին, Նեմեցը, Ֆ. Պոստը և Վիմմերը։ Ազնավուրը սերտ հարաբերություններ էր օտարերկրացի բուսաբաններ Դեգենի (Հունգարիա), Բորնմյուլլերի (Գերմանիա) և Բովերի (Շվեյցարիա) հետ։

Նա նամակագրական կապեր է ունեցել ու գրքեր փոխանակել այնպիսի բուսաբանների հետ, ինչպիսիք են՝ Արոնսոնը, Դավիդովը, Տիրացույանը, Ֆլահոլտը, Ֆրեյնը, Կադեսոն, Դոդենսը, Հանդել-Մացետտին, Հիլբերանդը, Կատսը, Մալին, Մանիսաջյանը, Գ. Պոստը, Պաուերսը, Ջիհեն, Վելենովսկին և Վորոնովը։

1897—1918 թթ. ընթացքում Ազնավուրը ոչ միայն ուսումնասիրել է Ստամբուլի շրջակայքի բուսական աշխարհը, այլև տարբեր առիթներով զբաղվել է Կոնյայի, Մարզվանի, Ռիզեյի, Վանի, Արարատի և Էգեյան ծովի Սիրա կղզու բուսականությամբ և իր գիտական եզրակացությունները 19 հոդվածներով ֆրանսերեն լեզվով հրատարակել է Ֆրանսիայում, Հունգարիայում, Շվեյցարիայում և Գերմանիայում։ Ազնավուրի հարուստ հերբարիումն ու աշխատությունները հատուկ տեղ են գրավում Ստամբուլի ու Անատոլիայի ֆլորայի ուսումնասիրության բնագավառում։ Նա հայտնաբերել է 93 նոր բույսեր, որոնք բաղկացած են 44 նոր տեսակներից, 4 նոր ենթատեսակներից, 37 նոր տարատեսակներից և 8 նոր ենթատարատեսակներից։ Ազնավուրի անվանակոչած 44 նոր տեսակներից 22-ը պատկանում է Ստամբուլի ֆլորային, 9-ը՝ Վանի, 6-ը՝ Արարատի, 4-ը՝ Կոնյայի, 1-ը Դերենդեհի, 1-ը՝ Մարգավանի շրջակայքին և 1-ն էլ Սիրա կղզուն։

Դեռևս իր գիտական գործունեության սկզբնական շրջանում նա նկատում է, որ Ստամբուլի ֆլորան համարյա չուսումնասիրված, կուսական մի բնագավառ է, ուստի նա իր ամբողջ եռանդն

---

* Կյանքն ու Ստամբուլի ֆլորային նրա մատուցած ծառայությունը, առանձնատիպ թուրքական կենսաբանական ամսագրից, 14 (2):49—64, 1964 թ. (համառոտ թարգմանություն)։

ու կարողությունը նվիրում է «Ստամբուլի ֆլորա»-ի հրապարակմանը։ Սակայն 1920 թ. նոյեմբերի 11-ին, 59 տարեկան հասակում, Ագնավուրը մահանում է։ Նրա շիրիմը գտնվում է Ստամբուլի Մեջիդիեքյոյի հայ կաթոլիկ համայնքի գերեզմանատանը։

Մահից անմիջապես հետո նրա բնակարանի մի քանի սենյակները զավթվում են և իր ազգականների վկայությամբ 20.000 բույսերի օրինակներից բաղկացած հերբարիումը, հարուստ դրադարանն ու հրապարակման համար համարյա պատրաստ «Ստամբուլի ֆլորան» մնում են այնտեղ։

Երկու տարի անց «„Magyar Botanikai Lapok- ամսագիրը, հաղորդելով Ագնավուրի մահվան մասին, նշում է, թե Ստամբուլի ֆլորայի մասին 5 հատորանոց նրա աշխատությունը և 15000 նմուշից բաղկացած հերբարիումը դարձել է Ստամբուլի Ռոբերտ Կոլեջի սեփականությունը։

1945 թ. ֆրանսիական բնագրի հիման վրա սկսվեց հրատարակվել աշխատության թուրքերեն թարգմանությունը։ «Ագնավուրը պատրաստել ու ամբողջական ձևով գրի էր առել ֆլորայի մասին մի աշխատություն։ Այն գրված պիտի լիներ ֆրանսերեն, իսկ նոր տեսակների նկարագրությունը՝ լատիներեն։ 4 հատորից բաղկացած այս ձեռագրի ամեն մի հատորն ուներ մեկ թիզ երկարություն և 3 մատ հաստություն։ Ագնավուրը այդպես էլ ասում էր՝ աշխատությունը պատրաստ է տպագրության։ Պոստը Ագնավուրին պիտի հիշատակեր որպես հեղինակ, իսկ իրեն՝ որպես հրատարակիչ և կամ աշխատությունը լրացնող ու տպագրության պատրաստող»,— գրում է Վիմները։

Նույն թվականին Ստամբուլի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի բնագիտության բաժնի ամսագրի 7-րդ համարում լույս է տեսնում Ագնավուրի վերջին աշխատությունը՝ «Բողազիչիի ու նրա շրջակայքի ֆլորան», բայց ոչ որպես նրա մենագրությունը (հեղինակներ՝ Աննա Պոստ և դ-ր Բերտրամ Վ. Դ. Պոստ, թարգմանիչ՝ դ-ր Մեհպարե-Բաշարման)։

Այսպիսով՝ դեռևս 1918 թ. Ագնավուրի հրատարակած վերջին հոդվածում նկարագրված երկու տարբեր տեսակները, որոնց օրինակները նա նվիրել էր իր բարեկամ դ-ր Պոստին, 27 տարի անց սեփականացվում են ու գիտական աշխարհին ներկայացվում դ-ր Պոստի ու իր կնոջ հեղինակությամբ։

Ագնավուրի բույսերը 41 տարի հետո հանգրվանել են Էդինբուրգի՝ Թուրքիայի ֆլորան ուսումնասիրող դ-ր Դեվիսի ու նրա աշխատակիցների իսկական գիտական օջախում։

Արդ Բեյօղլուից Բողազիչի, Բողազիչիից Ժնև և վերջապես Ժնևից Էդինբուրգ տեղափոխված այս արժեքավոր հավաքածուն և աշխատությունը այժմ փախցրել ենք մեր ձեռքից։

Մեզ մնացել են միայն և միայն ֆրանսիական Սեն Բենուտ լիցեյում Ագնավուրի կրկնօրինակներից 500 օրինակից բաղկացած 9 տուփ բույսերը։

Ստորև բերվում է Ժ. Վ. Ագնավուրի 1897—1918 թթ. անվանակոչած 44 նոր տեսակների (փակագծերում տրված է բույսերի հավաքման վայրը) ցուցակը։

Նոր տեսակներ (Species nova)

Thesium bertramii (*Կոնյա*), Gypsophila diaphylla (*Վան*), Paeonia kavachensis (*Վան*), Nigella bithynica (*Ստամբուլ*), Ranunculas thracicus (*Ստամբուլ*), Sisymbrium anomalum (*Ստամբուլ*), Isatis arenaria (*Ստամբուլ*), Arabis araratica (*Արարատ*), Erysimum degenianum (*Ստամբուլ*), Sedum proposticum (*Ստամբուլ*), Sedum pulchellum (*Վան*), Parnassia vanensis (*Վան*), Potentilla bertramii (*Արարատ*), Alchemilla minutiflora (*Ստամբուլ*), Ononis decipiens (*Ստամբուլ*), Trifolium parantzemae (*Վան*), Astragalus araraticus (*Արարատ*), Erodium bertramii (*Կոնյա*), Linum bithynicum (*Ստամբուլ*)- Linum vanense (*Վան*), Linum verruciferum (*Կոնյա*), Hypericum byzantinum (*Ստամբուլ*) Alssworthia byzantina (*Ստամբուլ*), Cuscuta laxiflora (*Ստամբուլ*), Solenanthus tchitounyi (*Վան*), Symphytum pseudobulbosum (*Ստամբուլ*), Onosma proponticum (*Ստամբուլ*), Teucrium degenianum (*Ստամբուլ*), Nepeta bertramii (*Արարատ*), Lamium oreades (*Արարատ*), Salvia lobryana (*Սիրա կղզի*), Anthemis rouyana (*Ստամբուլ*), Jurinea kilaea (*Ստամբուլ*), Serratula bornmuelleri (*Դերինդեհ*), Centaurea araratica (*Արարատ*), Lactuca vanensis (*Վան*), Alopecurus neglectus (*Ստամբուլ*), Poa iconia (*Կոնյա*), Aegilops turcica (*Ստամբուլ*), Colchicum chalcedonicum (*Ստամբուլ*), Morendera manissadijiani (*Մարգվան*), Allium peroninianm (*Ստամբուլ*), Tulipa tchitounyi (*Վան*), Ornithogalum byzantinum (*Ստամբուլ*)։